

«ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՅԻ»

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՅ ԷՄ. ՊԻՎԱԶԵԱՆ, ԵՐԵՒԱՆ, 1960 թ.

1964

Երեւանում լոյս է տեսել տաղանդաւոր
էւ բաղմարեղուն տաղասաց Յովհաննէս
Թլկուրացոյ տաղերի ժողովածուն, աշ-
խատասիրութեամբ Էմ. Պիպազեանի, եւ
որը հրատարակել է «Մ. Արեղեանի ան-
ունան Գրականութեան Ինստիտուտը» :
Յովհաննէս Թլկուրացի

Յովհաննէս Թլիկուբանցիին մէկն է միջնադարի Հայ աշխարհիկ բանաստեղծական գրականութեան ա'յն նշանաւոր տաղերգուներէրից, որը ժողովրդին աւանդ է թողել պատկերաւոր գեղեցիկ տաղեր եւ դանձեր, որոնց մասին իր ժամանակին տարրեր ուսումնասիրութիւններ հրատարակել են տաղանդաւոր բանասէրներ՝ Հ. Մ. Չամչեանը, Հ. Ղեւոնդ Ալիշանը, Կարապետ Կոստանեանցը, Հ. Ներսէս Ալիշանեանը, Հ. Մկրտիչ Պոտուրեանը, Արշակ Չօպանեանը, Նորայր Եսսս. Պօղարեանը եւ ուրիշներ :

էմ. Պիլադէանի աշխատասիրած «Յովհաննէս Թրիկուրանցի» խորագրով գիրքը մինչեւ օրս հրատարակուածներէց տարբերում է նրանով, որ ունի բաղմբերանդ բովանդակութիւն եւ նախատեսուած է Հայ գրականութեան պատմութեան հարցերով զբաղուողներին համար:

Ժողովածուն ընդգրկում է ընդամենը 29 տաղ (5ը յաւելուած է) եւ իբ հիմնական բովանդակութեամբ բաղկացած է մի քա-
թիւն» բաժինն է, ուր ցոյանում է Յով-
հաննէս Թրկուրանցու ապրած ժամանա-
կաշրջանի եւ կեանքի պատկերը: Այնտեղ
Պիլաղեանը քննութեան է առել նշանաւոր
տաղասացի մասին բոլոր բանասէրներին
նախապէս զրած տեղեկութիւններն ու

լուսարանութիւնները, ընդգծելով, թէ Յովհաննէս Թուղբուրանցի տաղասացը եւ Սսի Յովհաննէս Թվուրանցի կաթողիկոսը տարբեր անձնաւորութիւններ են եւ այդ հիմնական խնդրի յայտնութեան համար առաջնութեան պատիւը պատկանում է Տաղասացին, մաստակաւոր եւ անուանի բանասէր Հ. Ներսէս Ակինեանին: Նկատենք, սակայն, որ էմ. Պիլպզեանի դրքի «Ուսումնասիրութիւն» բաժնում տաղասացի մասին կենսադրական առանձին նորութիւններ չկան, բացի ՅՅրդ էջի յիշատակութիւնից, ուր նշուած է, թէ «Յովհաննէս Թվուրանցին եղել է... երգող-երգիչ, երաժիշտ-եղանակահան, ինչպէս եղել են Ներսէս Շնորհալին եւ ուրիշները»: Նշենք, սակայն, որ «երգող-երգիչ» Թվուրանցին չի եղել աշուղ, ինչպէս այդ հանդամանքն ընդգծել է տաղանդաւոր բանասէր Արշակ Զօպանեանը:

Այնուհետև «Յովհաննէս Թլկուբանցի» զրքում կարեւոր տեղ են զբաղում տաղասացի ստեղծագործութիւններին նուիրուած էջերը, որոնց էմ. Պիլադեանի բաժանել է մի քանի հիմնական մասերի. 1) Սիրոյ եւ բնութեան տաղեր, 2) Խրատական-բարոյախօսական տաղեր, 3) Վիպական տաղեր եւ 4) Կրօնական յօրինուածքներ:

Անժխտելի է, որ տաղանդաւոր տաղա-
սաց Թլկուբանցու մեղ աւանդ թողած
դրականութեան մէջ առանձնայատուկ
տեղ են դրաւում սիրային եւ դարնան նը-
ւիրած տաղերը, որոնք իրենց բովանդա-
կութեամբ զոգտրիկ, զունդեղ եւ պատ-
կերաւոր ստեղծագործութիւններ են, որ-

տեղ երգվին երգել է սէրն ու հիասթափ-
բնութիւնը, երգել է դարնան ու կնոջ գե-
ղեցկութեան հմայքն ու վեհութիւնը: Սա-
կայն, թլկուրանցու մի շարք տաղերին
առանձին գրաւչութիւն են տալիս ժողո-
վրդակալան բանահիւսութեան պատկեր-
ներն ու երանգաւորումները և իրենց ինք-
նատիպ ու նրբին արուեստով միջնադարի
հայ բանաստեղծական գրականութեան
մէջ պատուաւոր տեղ են գրաւում:

Ուրոյն արժէք ունեն նաեւ խրատական-
բարոյախօսական տաղերը, որոնք իրենց
չօչափած նւթերով դաստիարակչական
բնոյթ ունեն: Այնտեղ տաղասացը խոր-
հուրդ է տալիս-հեռու մնալ ոչ միայն
հարբեցողութիւնից, անառակ կեանքից,
ալլեւ կեռծաւոր մարդկանցից:

Գրոհար տողեր կան մահուան էությունը պատկերող թվերանցող որոշ տողերի մեջ, որոնք փայլում են նաև իրենց փլուխով պալան մտորումներով:

Այստեղ, սակայն, ընդդժենք, որ իմ. Պիլլազեանի «Յուլհաննէս Թլիկուրանցի» չքով տաղարանի տաղերը թէեւ առանձին սիրով վերլուծութեան են ենթարկուած, բայց կան այնպիսի կտորով եղրակացութիւններ, տեղեկութիւններ ու բացատրութիւններ, որոնք տրամաբանական հիմք չունեն եւ չեն դիմանում քննադատութեան:

Կայ մի այլ հիմնական թերութիւն. Էմ. Պիվազեանը Յովհաննէս Թլկուրանցու տաղերը խմբագրելիս դրժում էի հրատարակել կրօնական որոշ ոտանաւորները, պատճառաբանելով, թէ՝ «մնացած չորսը կրօնական ընոյթի սակաւարժէք ստեղծադործութիւններ են»։ Այս տողերն արձանագրելիս Էմ. Պիվազեանը մոռացել է մի կարեւոր հանգամանք, որ տաղասացի կրօնական աշխարհայեցքի էութեան մասին ցայտուն դադարաւար կազմելու համար պիտի տարբերակուէին տաղերի տպագրութիւնն անհրաժեշտ այլ տաղերի տպագրութիւնն անհրաժեշտ էր, մանաւանդ հայ գրականութեան պատմութեան հարցերով դրադուղներէ համար։ Բայց Պիվազեանը քմահաճ ցենզուրայի է ենթարկել չորս տաղերը եւ ընթացիկ ժամօթանալու թերցոյցին զրկել է լրիւ ծանօթանալու

ԹԼԻՈՒՐԱՆՅՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՅԵԱԳՔՆԵՐԻ
ԷՈՒԹԵԱՆ ՀԵՄ :

Աւելի արժէքաւոր են զրբի 79-114 էջերում Յովհաննէս Թլկուրանցու գրական ժառանգութիւնը պատկերող նիւթերը, ուր ծանօթանում էք տպագրւոյնների, ձեռագրւոյնների եւ տաղերի բնագրերը կազմելու հանգամանքների հետ :

Այնուհետեւ գրքում առանձին տեղ են
գրաւում «Ծանօթագրութիւններ եւ բա-
նասիրական դիտողութիւնները» որտեղ
իւրաքանչիւր տաղի մասին տեղեկութիւն-
ներ կան եւ բանասիրական լուսաբանու-
թիւններ, որոնք վերաբերում են տպա-
գրութեան եւ ձեռագիր տաղերին: Նկատենք,
սակայն, որ այս բաժնի մի քանի մասե-
րում դիտական բանասիրութեան լուրջ
մօտեցման եւ դիտողութիւնների փոխա-
րէն՝ իշխում են քմահաճ ու անիմաստ բա-
ցատրութիւններ եւ անհեթեթ ենթադրու-
թիւններ: Սակայն մեր ընդգծումները
սարդերի փաստական տուեալներով:

Որ միջնագարեան տաղերգուները, ինչպէս նաեւ Յովհաննէս Թլկուբանցու տաղերն ունեն իրենց տարբերակները, երբեմն նոյնիսկ մէկից աւելի, դա անժխտելի ճշմարտութիւն է : Դրանց համեմատութիւնն անհրաժեշտ է, ճշտելու եւ վերականգնելու համար տուեալ տաղերի բնագրերը, հեղինակային ինքնագրերը, որոնք ժամանակի ընթացքում փոփոխուել եւ աղաւաղուել են զանազան գրիչներէ ձեռքով :

Այդ նպատակով էլ ԹԼԿուրանցու «Նվերայ անդղամ կանանց» տաղի մի հին տարբերակը 1470 թուին գրուած մի ձեռագրից արտադրելով՝ 1954 թուականին հրատարակեցինք «Ֆազմովէպ»ում: Սակայն, էմ. Պիվազեանն, առանց փաստական տուեալների, սոսկ հիմնուելով ենթադրութեան վրայ, իր գրքում այդ տաղի մասին արձանագրել է այսպիսի տողեր. «Մեզ համար, սակայն պարզ է, թէ հրատարակութիւնը ձեռագրի անաղարտ քննարկնակութիւնն է, թէ ոչ»:

Այս անպատասխանատու տողերը զրե-
լիս էմ. Պիլադեանը մոռացել է մի ան-

Ժխտելի ճշմարտություն, որ ամեն մի բանասեր, որը նախանձախնայելի է հայ դրականության ու մշակույթի զարգացմանը, ու էլ տաղաբանի ստեղծագործությունն ընդօրինակելիս ունի մի վեհ պարտականություն — տալ տուեալ տաղի հարազատ պատկերը: Սակայն, էմ. Պիվադեանն աւելի խորացնելով իր բանասիրական «գիտությունը», զբաղուել է այսպիսի «գիտարարութեամբ». «Բանն այն է, որ զբրուած հարցի տեսակէտից Ա. Երեմեանի հրատարակութիւնը անվստահութիւն է ներշնչում մի կողմից, միւս կողմից էլ նա իր տեղեկութիւնները, թուում է, թէ քաղում է ի լրոյ»: Ո՛չ աւել, ո՛չ պակաս: Նման յանդուգն, անհեթեթ եւ քմահաճ ենթադրութիւններ կարող են անել միայն նրանք, որոնք զիտեն փաստերն ու ճշմարտութիւնը միտումնաւոր կերպով խեղաթիւրել, որպէսզի կշիռ ունենայ իրենց տեսակէտը:

Բայց դեռ կարգաւոր էմ. Պիվադեանի զբբի 262րդ էջում տաղանդաւոր բանասէր՝ Հ. Ներսէս Ակինեանին վերագրուած հետեւեալ մեղադրական տողերը եւս. Երեմեանը «իր տեղեկութիւնը քաղում է 1924 թ. «Արեւ»-ում տպուած Ն. Ակինեանի յօդուածից, որտեղ հեղինակը թիւրիմացաբար գրում է, թէ նշում «տաղարան»-ում տպագրուած են Թիւրքերանցու հինգ տաղերը: Ըստ երեւոյթին Ն. Ակինեանը եւս ի լրոյ է գրել, քանի որ նոյն «Արեւ»-ում Թիւրքերանցու տաղերը հրատարակելիս չի օգտագործել «Տաղարանը»:

Այս տողերն ո՛չ միայն իրականութեան չեն համապատասխանում, այլեւ գրանք էմ. Պիվադեանի բանասիրական մտորումների եւ վառ երեւակայութեան գլուխգործոցն են: 1924 թուին «Արեւ» ամսագրում տպուած Հ. Ներսէս Ակինեանի յօդուածից երբեք չենք օգտուել: Բայց այժմ էական այդ չէ, այլ այն ցաւալի երեւոյթը, որ էմ. Պիվադեանն իր զբբում Հ. Ներսէս Ակինեանին մեղադրելիս միանգամայն խորհրդաւոր լռութիւն է պահպանել մի ուշագրաւ վաւերագրի մասին: Դա

1951 թուին Երեւանում խմբագրուած եւ Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Մ. Արեւեանի անուան դրականութեան ինստիտուտի հրատարակած եւ լուսաւորութեան մինիստրութեան կողմից հրատարակուած «Հայ Գրականութեան Պատմութիւն» խորագրով գիրքն է, որի 186րդ էջում կարդում ենք պրոֆ. Մ. Մըկերեանի գրած հետեւեալ տողերը. «Թըլկուրանցին այնքան հեղինակութիւն է վայելել, որ 1513 թուին Վենետիկում տպագրուած առաջին հայերէն գրքերից մէկում՝ «Տաղարան»-ում, տեղ են դրել նրա բանաստեղծութիւններից հինգը»:

Ինչ երեւոյթով բացատրել, որ պրոֆ. Մ. Մկերեանի փաստական վաւերագիրն էմ. Պիվադեանն իր զբբում չի յիշատակել: Առանց խորանալու պատճառների մէջ, միայն այսքան նշենք, որ էմ. Պիվադեանը բարեխղճութեամբ չի մօտեցել աղբիւրներին: Նա չի յիշատակել նաեւ պրոֆ. Մ. Մկերեանի 1946 թուին Երեւանում հրատարակած «Գրականութեան Բրեստումաւտիա» գրքում լոյս տեսած Յովհաննէս Թիւրքերանցու վեց տաղերը, ո՛չ էլ Վրթանէս Փափաղեանի «Գրականութեան պատմութիւն» գրքի ոտանաւորները եւ այլ կարեւոր աղբիւրներ:

Բայց կայ էականը: էմ. Պիվադեանի բարոյական պարտականութիւնն էր իր զբբում ճշտել պրոֆ. Մ. Մկերեանի 1951 թուին հաղորդած տեղեկութիւնները (եթէ իրօք սխալ են), որովհետեւ Հայաստանի միջնակարգ դպրոցների 8րդ դասարաններին հարիւր հազարաւոր ուսանողները կարդում են «Հայ Գրականութեան Պատմութիւն» գիրքը եւ սխալ սովորում պրոֆ. Մ. Մկերեանի արձանագրած «անճիշտ» տեղեկութիւնները:

Այժմ սրբագրենք էմ. Պիվադեանի «Յովհաննէս Թիւրքերանցի» զբբի 261րդ էջում ընդգծուած հետեւեալ անիմաստ տողերը եւս. «Բազմավեպ»-ում հրատարակուած օրինակը (1470 թ.), որ մեր ունեցած աղբիւրներից ամենահինն է, — գրում է նա, — մի քանի տեղ զգալիօրէն տարբերում է մնացած բոլոր տուեալներից»:

էմ. Պիվադեանն այս տողերը գրելիս նկատի չի ունեցել մի շատ հասարակ հանգամանք, որ «զգալիօրէն տարբերութիւնը» կատարուել է ձեռագիր բնագրից արտագրող գրչի ձեռքով: Ուրեմն, «Բազմավեպ»-ում տպագրուած օրինակի փոփոխութիւնը գալիս է այն ձեռագրից, որ գրչի կողմից ընթերցանութեան եւ արտագրութեան ժամանակ ենթարկուել է փոփոխութեան: «Բազմավեպ»-ում մեր հրատարակած տաղը տպագրել ենք այնպէս, ինչպէս գոյութիւն ունի 1470 թուի ձեռագրում:

Այստեղ կանգ առնենք էմ. Պիվադեանի մի քանի «բանասիրական դիտողութիւններ» վրայ եւս, ուր նա Յովհաննէս Թիւրքերանցու ապրած ժամանակի հարցը պարզելիս մեղադրել է Հ. Ներսէս Ակինեանին: Իր զբբի 15րդ էջում էմ. Պիվադեանն արձանագրել է այսպիսի տողեր. «... Յովհաննէս Թիւրքերանցուն, — գրում է Տաղասէրը, հանդիպում ենք մենք արդէն 1371, 1394, 1469 թուերին գրուած ձեռագրերում, թէ իբրեւ զանձասացի եւ թէ որպէս տաղասացի: Այս հարկաւոր է ընդունել, որ նա ապրում էր 1371 թուից առաջ»:

Այս տողերի ճշտութիւնն էմ. Պիվադեանը հերքում է հետեւեալ կտրուկ տողերով. «Սակայն, Տաղասէրի տուած ժամանակագրութիւնը խախտւում է եւ անընդունելի»:

Այնուհետեւ էմ. Պիվադեանն աւելի խորացնելով Հ. Ակինեանի մասին իր «նկատողութիւնները», իր զբբի 100րդ էջում նորից կրկնում էր իր անդամ մը նշած նոյն մտքերն այսպիսի տողերով. «Ինչպէս տեսնուի, իրականութեան չի համապատասխանում Ն. Ակինեանի յայտնած այն տեղեկութիւնը, թէ Թիւրքերանցուն իբրեւ տաղասացի հանդիպում ենք 1371, 1394 եւ 1469 թուերին գրուած ձեռագրերում»:

Բայց էմ. Պիվադեանի «բանասիրական» կտրուկ եւ վճռական կարծիքից յետոյ առաջ բերենք նաեւ 1951 թուին Երեւանում հրատարակուած «Հայ Գրականութեան Պատմութիւն» գրքի 186րդ էջում պրոֆ.

Մ. Մկերեանի Յովհաննէս Թիւրքերանցուն նուիրած հետեւեալ տողերը. «Նրա (Թըլկուրանցու — Ա. Ե.) անունը եւ տաղերը ամէնից վաղ հանդիպում ենք 1371 եւ 1394 թուերին գրած ձեռագրերում: Այստեղից էլ եղբակացում է, որ նա ապրել եւ ըստեղծագործել է 14րդ դարում»:

Ինչո՞վ բացատրել այս խիստ հակասական լուսաբանութիւնները: էմ. Պիվադեանը գրում է, թէ Հ. Ներսէս Ակինեանի տուած «ժամանակագրութիւնը, խախտւում է եւ անընդունելի», ընդգծում է, թէ «իրականութեան չի համապատասխանում» նրա յայտնած տեղեկութիւնը: Իսկ Երեւանի Փիլիոլոգիական դիտողութիւնների դոկտոր եւ պրոֆ. Մ. Մկերեանը մերժելով մերժում է էմ. Պիվադեանի կարծիքը եւ հաստատում Հ. Ներսէս Ակինեանի տեսակէտը, թէ Թիւրքերանցուն անունը եւ տաղերը ամէնից վաղ հանդիպում ենք, 1371 եւ 1394 թուերին գրուած ձեռագրերում:

Այստեղ ինքնին առաջ է գալիս մի հարց — ո՞ւմ հաւատալ, էմ. Պիվադեանի՞ն թէ պրոֆ. Մ. Մկերեանի: Բայց կայ աւելի կարեւորը — ինչո՞ւ էմ. Պիվադեանն իր կարեւորը — ինչո՞ւ էմ. Պիվադեանն իր կարեւոր կանգ չի առել պրոֆ. Մ. Մկերեանի հրատարակած փաստական նիւթերի վրայ, ինչո՞ւ նրա յայտնած կարծիքները եւս քննութեան բովից չի անցկացրել, որպէսզի պարզուի ճշմարտութիւնը: Այդ հանգամանքը վկայում է, որ էմ. Պիվադեանի գիրքն ունի մի շարք հիմնական բացեր եւ թերութիւններ, իսկ նրա մօտեցումն ու քննական տեսութիւնը միանգամայն միակողմանի են:

Այժմ կանգ առնենք մի ուրիշ կարեւոր հանգամանքի վրայ: Յովհաննէս Թիւրքերանցու մի շարք տաղերն ունեն իրենց տարբերակները, որոնց բարեխղճ եւ գիտական համեմատական, բաղդատական քննութիւնները կը նպաստեն ճշտելու եւ վերականգնելու տաղասացի ստեղծագործութիւնների բնագրերը, որոնք ժամանակի ընթացքում աղաւաղուել եւ փոփոխուել են զանազան գրիչների ձեռքով: էմ. Պիվադեանն այդ դժուր որոշ աշխատանք կատարել է, բայց նրա վերականգնած մի

շարք տաղերն անխտաճութիւն են ներ-
շնչում: Այդ տաղերի ճշտութեան եւ հա-
րադատութեան մասին դադարաւ կազմե-
լու նպատակով խորագնին քննութեամբ
համեմատեցինք բազմաթիւ տպագիր աղ-
բիւրներին, ինչպէս մամուլում, զբաղա-
նութեան պատմութեան զբեքում, դա-
սազբեքում, հայերէն ձեռագիր օրինակ-
ներում, զեղարուեստական հանդէսնե-
րում եւ առաջնակարգ բանասէրներին խմ-
բադրած զբեքում լոյս տեսած տաղերի
հետ եւ դառնալով տարբերութիւններ:
Յայտուն դադարաւ տալու համար այս-
տեղ առաջ բերենք մի քանի փաստական
օրինակներ էմ. Պիլազեանի զբեքից.

Ը տաղ, «Ահա եղեւ պայծառ գարուն»
էջ 139*

Ահա' (ո'չ թէ - ահա), ծաղկեալ ա-
յիքն (ո'չ թէ - ծաղկեաց այիքն), լերինք
(ո'չ թէ - լերունք, յարօտ (ո'չ թէ - ա-
րօտ), պիւլպիւլին (ո'չ թէ - պիւլպիւլին):

ԺԳ տաղ, «Գեւայ բահար» էջ 157

աչեւ (ո'չ թէ - աչեւ), ունքն կէռ էր
(ո'չ թէ - ունքն է կէռեր), ճակատդ է
լուս եւ լուսքնար (ո'չ թէ - ճակատդ է
լոյս ու լոյս կու տայ), ոսկի թել է (ո'չ
թէ - թելով), մարմնդ եկեալ (ո'չ թէ -
անձինդ իջեր), թափուի (ո'չ թէ - թա-
փի), պատկերդ (ո'չ թէ - մատուցն), ու
ճօշ կու տայ (ո'չ թէ - կու ճօճ կուտայ),
անյատակ (ո'չ թէ - անատակ), բեհեղ
հաղեր եւ ծիրանի (ո'չ թէ - բեհեղ հաղ-
նիս ու ծիրանի), ծաղկերդ (ո'չ թէ - ծըլ-
պերդ):

ԺԹ տաղ, «Է՛ մահ» էջ 173

Է՛ մահ, քանի՛ (ո'չ թէ - Է՛ մահ, քա-
նի), եւ կու սարսափիմ (ո'չ թէ - ու սար-
սափիմ եւ), լեղւոյն (ո'չ թէ - լեղոյ),
եղի՛, ւ՛ ամենայն լեղւոյ (ո'չ թէ - լեղի
ամենայն լեղոյ), միթէ դու ի քեզ նման
ես (ո'չ թէ - միթէ դու ի քեզ նման ե՞ս),
փո՛ւ քեզ (ո'չ թէ - փո՛ւ քեզ), ի՞նչ շահ

է իմաստութիւնս (ո'չ թէ - ինչ շահ է ի-
մաստութիւնս), զողէտ (ո'չ թէ - զան-
դէտ), անմեղ եկայ ի յաշխարհս (ո'չ թէ
- անմեղք ի յաշխարհս եկի), եւ մեղօք
երթայ (ո'չ թէ - ու մեղօք գնամ), ոչ գի-
տես ում ժողովես (ո'չ թէ - ո'չ գիտես
թէ ում ժողովես), զՄովսէս մարգարէն
(ո'չ թէ - Մովսէս մարգարէն չասես), իսկի
չամաչես (ո'չ թէ - իսկի չի վախես), զնա
(ո'չ թէ զնայ), զով ի մէջ մեղացն ըմ-
բռնես (ո'չ թէ - ի մեղաց մէջն զով բռ-
նես), Յովհաննէ՛ս (ո'չ թէ - Յովհաննէս),
եօթանասուն տարի (ո'չ թէ - եօթանա-
սում ամ), ի մեղաց մէջն կացեր ես (ո'չ
թէ - եւ ի մահուն դուռն հասեալ ես):

ԺԽ տաղ, «Քանի դատես» էջ 178

Ձայնչափ (ո'չ թէ - զայնչափ), չարիք,
որ (ո'չ թէ - չարիքդ որ), արա՛ (ո'չ թէ
- արայ), դարձի՛ր (ո'չ թէ - դարձիր),
մինչեւ այսօր (ո'չ թէ - մինչեւ ի քեզ),
կայ (ո'չ թէ - կա), դարգաս ունի (ո'չ թէ
- դարպասունի), նողուն է (ո'չ թէ - հողուն
են), զնա (ո'չ թէ - զնայ), մի դարձած
(ո'չ թէ - մի ձգեալ), մէջ էր պառկած
(ո'չ թէ - մէջ պառկած), վատ (ո'չ թէ -
չատ), որ ծամն ու վարսն են յօրինած (ո'չ
թէ - ծամն ու վարսն են յօրինած), ի
մահու (ո'չ թէ - մահուն), արա՛ (ո'չ թէ
- արայ), անդէն (ո'չ թէ - անտէն):

Ի տաղ, «Օրինեալ անուն» էջ 187

ո'չ կողն ծուծ ունի եղբայրդ (ո'չ թէ -
ոչ կողն ծուծ ունի, եղբայրդ), ուղեղդ
(ո'չ թէ - ուղիղ), Արեւորդուոյ (ո'չ թէ -
եւ ոչ ոքէ), զեղբարքն (ո'չ թէ - զեղ-
բայրքն), զայլոց լսէ (ո'չ թէ - զայլոց
չլսէ), բայց զաղգահանին (ո'չ թէ - զաղ-
գահանքն), զայ հարցանել (ո'չ թէ - կու-
ղէ զնայ եւ տեսանէ), կուսանան (ո'չ թէ
- կուսանքն):

*) Էմ. Պիլազեանի վերականգնած տաղերի բա-
ռերը եւ կէտադրական սխալներն առնուած ենք փա-
կազօրէր մէջ: Ար. Եր.

ԻԱ տաղ, «Իմ սիրտ» էջ 191

Իմ սի՛րտ, լսէ (ո'չ թէ - իմ սիրտ լսէ),
ոյ՛ որ չգիտէ, թո՛ղ գիտենայ (ո'չ թէ -
ոչ որ չգիտէ թող գիտենայ), փորձէ՛ եւ
տե՛ս (ո'չ թէ - փորձե եւ տես), ասա՛ (ո'չ
թէ - ասա), քանի ողջ ես, զքեզ պահէ՛
(ո'չ թէ - քանի ողջ ես զքեզ պահէ), անձդ
(ո'չ թէ - անձինդ), անդէտ (ո'չ թէ - ան-
դէտ), զնայ (ո'չ թէ - զնա), պահէ՛ (ո'չ
թէ - պահէ), թո՛ղ (ո'չ թէ - թող), մի՛
տար (ո'չ թէ - միտար), խեւ Յովհաննէ՛ս
(ո'չ թէ - խեւ Յովհաննէս), պահէ՛ (ո'չ
թէ - պահէ). նկատելի է, որ էմ. Պիլա-
զեան ստորակէտի եւ շեշտի նշանները մի-
անգամայն մոռացութեան է տուել:

Էլ կանգ չենք առնում միւս տաղերի
վրայ: Նշենք միայն այն, որ մեր ուղղում-
ները վկայում են, թէ էմ. Պիլազեանի
աղբիւրների համեմատական ուղղումները
թիւրքանցու տաղերի միանգամայն հա-
րադատութիւնը չեն պատկերում, իսկ նրա
հրատարակած «Յովհաննէս թիւրքանցի»
խորագրով զբեքում տպուած տաղերը կա-
րօտ են նորից բարեխիղճ եւ գիտական
վերաքննութեան եւ ստուգման:

Նշանաւոր տաղասացի տաղերի բնա-
դրային հարադատութիւնը ճշտելու հա-
մար ցանկալի է, որ Հայկական ՍՍՌ Գի-
տութիւնների Ակադեմիայի Մ. Արեւեա-
տութիւնների Ակադեմիայի Մ. Արեւեա-
տի անուան դրականութեան ինստիտուտը
մի յանձնարարութեամբ նշանակելով՝ ստուգի
մի յանձնարարութեամբ եւ մեր ուղղումները,
էմ. Պիլազեանի եւ մեր ուղղումները,
հոգիւրում բոլոր տպագիր եւ ձեռագիր
աղբիւրները, վերականգնելու համար
թիւրքանցու տաղերի հարադատ պատկե-
րը, իրենց ամբողջութեան մէջ:

Էմ. Պիլազեանի զբեքի թերութիւններին
էմ. Պիլազեանի զբեքի զօրութեամբ հա-
ղոնէ որոշ մասի պատկերը զօրութեամբ
մար այստեղ պարզենք մի հանգամանք
եւս:

Իր զբեքի «Ուսումնասիրութիւն» խորա-
գրով բաժնում Պիլազեանն ընդգծել է
այնպիսի կարծիքներ, որոնք արդիւնք են
հայտնի կարծիքների: Ահա փաստա-
շտապ եղբայրացութեան: Ահա փաստա-
կան օրինակներից մէկը. զբեքի 7րդ էջում

նա հայ շարականների մասին գրել է այս-
պէս. «... Սառն ու անկենդան շարական-
ներով երգում էին ու փառարանում կրօ-
նական տօնական օրերն ու սրբերի յի-
շատակները»: Այսպիսի մտքեր կարող են
արտայայտել միայն նրանք, որոնք զուրկ
են երաժշտական պատրաստութիւնից եւ
դադարաւ չունեն հայ շարականների ե-
րաժշտական արուեստի ա՛յն գունազե-
ղութեան ու նրբութիւնների մասին, ո-
րոնց հայ եւ օտար երաժիշտները բարձր
են գնահատել, իսկ մի շարք երաժիշտներ
ուսումնասիրութեան նիւթ են դարձրել:

Նոյն բաժնում էմ. Պիլազեանը գրել է
նաեւ այսպիսի տողեր. «Բանաստեղծական
ո'չ մի արտադրանք չենք գտնում այդ շրջ-
անում (այսինքն՝ միջնադարում, - Ա.
Եր.), որ զերծ լինէր կրօնական մոռացից
ու աշխարհիկ բնոյթ ունենար»:

Այս տողերի դէմ իրաւացի կերպով բո-
ղոքում են միջնադարեան բանաստեղծու-
թեան նշանաւոր եւ պայծառ գէմքերի՝
Փրիկի, Կոստանդին Երզնկացու, Յովհան-
նէս Երզնկացու, Գրիգորիս Աղթամարցու,
Նազալ Յովնաթանի եւ այլ անուանի եր-
գիչների գրականութեան գոհար տողերը:

Ճշտենք մի այլ կարեւոր սխալ տեղե-
կութիւն: Գրքի 30րդ էջում կարդում ենք.
«Տես Աս. Մնացականեանի նշուած յօդ-
ուածք: Ա. Երեմեանը գրում է, թէ «Վի-
ենայի Միթթարեան գիտնական բանա-
սէրներից Հ. Ներսէս Ալինեանը առաջինն
էր, որ թուրքերէն պատկերել է որ-
պէս աշխարհական»: Այս տողերից յետոյ
էմ. Պիլազեանն աւելցրել է. «Սա իրա-
կանութեան չի համապատասխանում. Ա-
լինեանը նման կարծիք չի յայտնել»:

Էմ. Պիլազեանի այս տողերն ո'չ միայն
ենթադրական տեղեկութիւններ են, այլ-
եւ փաստական որեւէ հիմք չունեն, բայց
նրա անպատասխանատու, անճիշտ եւ քը-
մահած եղբայրացութեան մասին դադա-
րաւ տալու համար բանանք «Հանգէս Ամ-
սօրեայ»ի 1933 թ. Յունուար եւ Փետրե-
ր (1-2) միացեալ թուերը, որի 129րդ
էջի վրայ կարդում ենք հետեւեալ վեր-
նագիրը. «Քաջն Լիպարիտ պատմութեան,

